# ԻՆՔՆԱԹԻՌՆԵՐ՝ ԱՂԱՎՆՈՒ ԹԵՎԵՐՈՎ

Տղան յոթերորդ դասարանցի՝ տասներկու տարեկան էր: Այսինքն, եթե մայրը ժամանակից շուտ չտաներ առաջին դասարան, հիմա տասնչորս տարեկան կլիներ՝ դասընկերների տարիքին: Երեխա էր, ուստի եւ տաշտակում մինչեւ հիմա մայրն էր լողացնում, մեջքի հետ տղայությունն էլ սպունգով օճառում-տրորում էր: Դասարանում աղջիկները նրա ներկայությամբ ծնկածալ էին ուղղում, եւ հասունացող օրգանիզմը ուտելու չհագեցող պահանջ ուներ:

Այս մի վերջինը՝ թերսնությամբ պատճառաբանված, առավել նկատելի էր վտիտ մարմնի վրա: Նիհար էր ու դյուրաշարժ: Դյուրաշարժ էր ու միամիտ: Եթե ինչ-որ բան չպակասեր վրան՝ գերազանցիկ կլիներ, ու մոր երազած հրաշամանուկը կկայանար՝ ազգի ապագա գիտնականը:

Իսկ նա պիտի քանդակագործ դառնա. անվիճելի մի պնդում:

Նկարչության դասատուն նրան սիրում էր, որովհետեւ երբեւէ երազած արու զավակը երեք ծնունդների մեջ չկայացավ՝ աղջիկ-աղջիկ-աղջիկ: Կենտ մի աբորտը վիժեցրեց երազածը, ուստի այս մի (ուրիշի) երեխային սիրում էր: Որովհետեւ նշանավոր քանդակագործ պիտի դառնա՝ ազգի պարծանքը: Դա կլինի հետո, պատերազմը վերջանալուց հետո, երբ մարդիկ թշնամանքից կկազդուրվեն, կջերմանան, իրար սիրելի կդառնան: Իր ամուսինն այլեւս չի համարվի անհետ կորած եւ կվերադառնա տուն: Կվերադառնա, եւ իրենք կունենան չորրորդ զավակը՝ արվեստագետ արուն: Բայց դա կլինի հետո, անորոշ ժամանակ հետո, իսկ իր սիրելի սան-տղան ընդամենը տասներկու եւ մի քիչ ավելի տարեկան է, դասամատյանի մեջ ազգանունով առաջինը, շարքում՝ վերջինը:

Տղան հետագայում բոյով կլինի, քանի որ այդ տվյալներն արդեն հիմա ունի: Եվ գեղեցիկ տղամարդ կլինի՝ մեծ ձեռնափերով, մազմզոտ: Մորուք կպահի քանդակագործների նման: Եվ շատ փող կվաստակի իր քանդակներով ու այլեւս չի թերսնվի:

Տղայի՝ Ասրյան Ավետիք անուն-ազգանվան դիմաց, դասամատյանում միշտ գերազանց գնահատականներ էին, բացի մաթեմատիկայից: Ուրեմն, նա հաստատ գիտնական չի դառնա, քանի որ առանց մաթեմատիկայի գերազանցության գիտնական չեն դառնում:

Եվ դրա համար միակ տխրողը մայրն էր, ամենաուրախը՝ նկարչության ուսուցչուհին:

Տղայի պատրաստած լավագույն քանդակները փայտե զինվորներն էին: Քանդակների միակ թերությունը մարմնաձեւերի անսմետրիկությունն էր, որի հիմնական պատճառը անատոմիայի չիմացությունն էր:

Դասի ժամին նկարչության ուսուցչուհին նրան ալբոմ-գրքույկ տվեց՝ մերկ մարմիններով, եւ տղան ամաչելով այն վերադարձրեց, չըմբռնելով նվիրատվության նպատակը: Այնժամ նկարչուհի դասատուն որոշեց, որ առանց մարմնակազմությունն

ուսումնասիրելու, տղան նշանավոր քանդակագործ չի դառնա: Բայց դա տղայի համար վաղաժամ էր, քանի որ պատերազմը դեռեւս չէր վերջացել, եւ նա թերսնվում էր:

Հետո սկսեցին իրենց քաղաքը ռմբակոծել, եւ տղան մի ինքնաթիռ քանդակեց՝ աղավնու թեւերով: Մայրը բարկացավ: Նրա բարկությունը ինքնաթիռի վրա էր, բայց ասաց.

-Դրա փոխարեն դասերդ սովորիր:

- Դպրոց չկա,- արդարացավ,- պարապմունք չկա, ի՛նչ սովորեմ: Ինչո՞ւ սովորեմ:

Եվ մայրը անիմաստ բարկությունից անզգուշորեն ջարդեց լամպի միակ ապակին: Տղան փայտե լամպ սարքեց եւ վրան մոմ ամրացրեց: Մոմը պինդ չէր ամրացվում ու վառվելիս ընկավ հատակի թաղիքին:

-Տունը կհրդեհե՞ս,- նայելով հանգած մոմին՝ չհերսոտվեց մայրը:

-Մոմը հանգած է,- արդարացավ,- պիտի հանգած մոմը ո՛նց կհրդեհի,- եւ փայտե լամպը գցեց վառարանի մեջ: Տղային գիպս էր պետք քանդակելու համար, բայց գրիպս չկար, եւ տղան նույնիսկ չգիտեր որտեղից ճարել այն:

Իսկ մի օր նրանց տուն եկավ նկարչության ուսուցչուհին: Ձեռքին ջրաներկ ու նկարչության մեծ տետր կար: Տղայի մայրը սուրճ էր պատրաստում եւ ոչ իրեն հատուկ շատախոսում: Ուսուցչուհին շատ անհոգ էր երեւում եւ նույնիսկ հմայիչ տեսք ուներ: Նրա՝ արվեստագետի անփույթ պահվածքը, անսովոր էր, ու մայրը համարյա պատկառանք չունեցավ:

-Նկարչուհի՞ եք,- հարցրեց գիտակի տոնով ու զգաց, որ տվածը ճիշտ հարց չէր՝ նրա մասին տեղեկություններ իմանալու համար:

-Համարյա: Նկարչության ուսուցչուհի եմ: Բայց ձեր որդին մեծ ապագա ունի:

-Հա,- շոյվեց, հիացավ մայրը,- գիտնական պիտի դառնա: Պարզապես հրաշամանուկ է:
- Իզո՛ւր,- սուրճը կում արեց ուսուցչուհին, իզուր եք երեխային ապակողմնորոշում, նա գեղարվեստի համար է ծնվել:

Եվ գտան, որ վիճելն երկուստեք անիմաստ է: Ու կանացի բնազգով գտան խոսակցության հարմար թեման, որը տղային չէր հետաքրքրում: Նա ամաչում էր ուսուցչուհուց եւ հաճախակի կարմրում էր մյուս սենյակում՝ Մայն Ռիդի գիրքը գրասեղանին դրած:

Ջրաներկը լավն էր, եւ նա սկզբում ափսոսում էր այն օգտագործել: Հետո որոշեց դրանով միայն ուսուցչուհուն նկարել: Նկարում էր, եւ ուզածը չէր ստացվում: Նվիրված ալբոմը լրիվությամբ ուսուցչուհին էր՝ տարբեր կեցվածքով: Այնուհետեւ տղան որոշեց քանդակել ուսուցչուհուն: Փայտը չէր ընդունում ուսուցչուհու մարմնագծերը, եւ տղան հաճախակի լացակումում էր:

Մայրը տեսավ ու բարկացավ, բայց բարկությունը չազդեց: Տղան չափազանց տխուր էր, եւ նրա տխրությունը կողմնակի ոչ մի սաստում չէր ընդունում:

Իսկ երբ ռմբակոծությունները դադարեցին, տղան նորից դասի գնաց: Նկարչության դասաժամերին նա անընդհատ փորձում էր ուսումնասիրել ուսուցչուհու դժվար դիմագծերը:

Դասամատյանում Ասրյան Ավետիք ազգանվան դիմաց, այլեւս համատարած գերազանց գնահատականներ չէին՝ ինչպես առաջ: Դասղեկը հեռախոսազանգով զանգատվեց տղայի մորը, եւ տղան ծեծ կերավ, թեեւ հայրը տղայի կողմն էր: Թեկուզ նա յոթերորդ դասարանցի-տասներկու տարեկան էր, բայց իրեն մեծ էր համարում ու լաց չեղավ:

Իսկ մի օր ուսուցչուհին նկարչության ժամին բռնացրեց տղային՝ իր դիմագծերը որոնելիս:

-Այդ ե՞ս եմ,- հարցրեց ու անողոքորեն թերթում էր ալբոմը:

-Սրանք ե՞ս եմ,- մատները տղայի գլուխը շոյում էին, եւ տղան առանց ահի լաց եղավ: Ուսուցչուհին համբուրեց տղայի քրտնքած գլուխը եւ աշակերտների շվարած հայացքի տակ դասասենյակում անքայլ դեգերում էր:

Տղան դասից փախավ ու տուն չգնաց:

Նկարչության հաջորդ դասին նա դարձյալ փախավ, եւ ուսուցչուհին դասերից հետո տղային բռնացրեց զբոսայգում:

- Գնա՛նք,- ասաց ու առանց ետ նայելու, քայլեց: Տղան հմայվածի պես հետեւեց նրան, եւ դարձյալ լացը գալիս էր:

-Գնա՛նք,- առանց ետ նայելու, կրկնեց ուսուցչուհին, եւ նրա ձայնը զարմանալի քնքուշ էր:

Տղան գլխահակ հետեւեց ուսուցչուհուն մինչեւ նրանց տուն: Ուսուցչուհին տանը շրջանակված շատ կտավներ ուներ: Ամենամեծ նկարը զինվորական համազգեստով էր՝ ռազմական հանդերձանքով, որ տեղադրված էր գրասեղանի գլխավերեւը: Զինվորականը մորուքով էր եւ ուներ խիստ հայացք: Ուսուցչուհին իջեցրեց նկարը, շրջեց ու դրեց պահարանի գլխին:

-Գնացեք քեռունց տուն,- ընկճված ձայնով ասաց երեք դուստրերին: -Եվ կսպասեք, մինչեւ գամ ձեր հետեւից,- հետո ընկղմվեց բազկաթոռի մեջ ու երկար լռում էր:

Տղան վախենում էր գլուխը բարձրացնել, որովհետեւ ուսուցչուհու կեցվածքն օտարոտի ու խիստ էր: Նա փախչել էր ուզում, սակայն ոտքերն ընդարմացել էին, եւ լացը գալիս էր մեղավորության զգացումից:

Ուսուցչուհին վեր կացավ, գրապահարանից նոր տետր հանեց ու մատիտներ:

- Ա՛ռ,- ասաց անհասկանալի ժպտալով ու շոյեց տղայի մազերը,- փորձիր ինձ նկարել: Առանց ամաչելո՛ւ,- եւ ինքը տղայի կարկամած հայացքի առաջ սկսեց դանդաղ հանվել: Նրա մերկացող մարմինը հագուստների ձերբազատումներից նոր ձեւ էր ստանում՝ սլացիկ ու անընմբռնելի: Տղան այդ մերկության մեջ շլացուցիչ լույս տեսավ ու ցավից փակեց աչքերը: Նրա աշխարհընկալման վերջին ծվենը աստիճանաբար մարեց լույսի ծանրությունից, եւ մարմինն ուշագնաց վայրէջք կատարեց հատակի գորգի վրա:

…Տղան յոթերորդ դասարանցի-տասներկու եւ կես տարեկան էր: Այսինքն, եթե մայրը սնապարծորեն ժամանակից շուտ չտաներ առաջին դասարան, հիմա տասնչորս տարեկան կլիներ՝ դասընկերների տարիքին: Երեխա էր, ուստի եւ, երբ այդ կիրակի մայրը տաշտակի մեջ լողացնում էր նրան, վճռական ձայնով ասաց.

- Եթե ուզում ես գիտնական դառնամ, վաղվանից ինձ տեղափոխիր ուրիշ դպրոց:
Մայրն առանց արձագանքելու՝ օճառը քսեց սպունգին:

Նրա մտքերում՝ դրսում հոլովվող ցանկալի խաղաղությունն էր ճախրում, ճիշտ այն թեւերով, որոնք քանդակել էր տղան ինքնաթիռի վրա:

-Լսեցի՞ր,- հարցրեց տղան՝ օճառը բերանի անկյուններից թքելով:

-Ձե՛նդ,- սաստեց մայրն ու ցավեցնելով սպունգը քսեց նրա հասունացող տղայությանը:

Տղան կուչ եկավ, եւ մայրը չհասկացավ՝ ցավից էր դա, թե՞ պարզապես ամաչելուց: